ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

26.10.20թ N03/13/8371-2020

ՀՀ Լոռու մարզ, գ.Մեծ Պարնի,
1-ին փողոց, N70 տուն
Մարտուն ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան

Ի պատասխան ՀՀ վարչապետին ուղղված և ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման վարչության 2020 թվականի հոկտեմբերի 4-ի N14/14.4/45451-2020 գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) վերահասցեագրված Ձեր 2020 թվականի սեպտեմբերի 24-ի դիմումի՝ Ձեր ընտանիքի բնակարանային խնդրի լուծման վերաբերյալ, հայտնում ենք.

ՀՀ Լոռու մարզպետի 2020 թվականի հունվարի 29-ի N01/101.1/00674-2020 գրությամբ Կոմիտե է ներկայացվել Ձեր ընտանիքի բնակարանային խնդրի վերաբերյալ ՆՎԴ6/0698/05/-13 գործով ՀՀ վարչական դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 24-ին կայացրած վճիռը (այսուհետ՝ Վճիռ), ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 14-ի N1-Ա որոշումը և ընտանիքի անդամներին վերաբերող փաստաթղթերը:

Թվարկված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Վճռով ոչ իրավաչափ է ճանաչվել Ձեր ընտանիքը Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակի հաշվառումից հանելուն ուղղված Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի գործողությունը և Մեծ Պարնի համայնքի ղեկավարի 2008 թվականի նոյեմբերի 30-ի N4 որոշումը:

Պետք է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 63-րդ հոդվածի համաձայն ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

Օրենքի 64-րդ հոդվածի համաձայն անվավեր ճանաչված ոչ իրավաչափ վարչական ակտը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների: Սակայն, եթե մինչև ոչ իրավաչափ վարչական ակտի անվավեր ճանաչելը դրա կատարման կամ կիրառման հետևանքով որևէ անձի վնաս է պատճառվել, ապա դա ենթակա է հատուցման նույն օրենքի VII բաժնի դրույթներին համապատասխան:

Օրենքի VII բաժնի 95-րդ հոդվածի դրույթների համաձայն ոչ իրավաչափ վարչարարության, իսկ սույն բաժնով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է համապատասխան համայնքն՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետում նշված վարչական մարմինների (տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար) դեպքում: Նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետով նախատեսված դեպքում վնասի հատուցումը կատարվում է համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

Թվարկված հանգամանքների և իրավադրույթների համադրության արդյունքում հայտնում ենք, որ ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի գործողության ոչ իրավաչափության հետևանքով Ձեր ընտանիքին պատճառված վնասը ենթակա է փոխհատուցման Օրենքի՝ վերը հիշատակված դրույթներով սահմանված կարգով և միջոցների հաշվին, ինչի մասին Դուք տեղեկացվել եք ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից:

10/26/2020

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Արմեն ՂՈՒԼԱՐՅԱՆ

Բնակարանային ֆոնդի կառավարման
և կոմունալ ենթակառուցվածքների վարչության պետ
Տանյա Արզումանյան 011 621-724